խորդ տեղապահ Վանայ. կ՚մնայ ի Նաալը-Դարու իբր քարոզիչ.

24. Տ. Ամբրոսիոս Ծ. վրդ. Ռուբինեան, Շապին-Գարահիսարի պաշտօնավարութենէն նոր դարձած։

25. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Արարդեան, քարոզիչ Ֆէրիքէօյի, ընտրուած առաջն. տեղապահ.

26. Տ. Յակոբոս Ծ. վրդ. Շահպազեան, նախորդ տեղապահ Բաղիշոյ. կ՚մնայ Ենիգիւղ իբր քարոզիչ.

27. Տ. Վահան Ծ. վրդ. Յակոբեան, տեղապահ Պալըքէսիրի և Պանտրմայի. կ՚մնայ Կէտիկ-Փաշա իբր քարոզիչ.

28. Տ. Յուսիկ Ծ. վրդ. Էսմէրեան. առժամանակեայ քարոզիչ Սամաթիոյ.

29. Տ. Վահան Ծ. վրդ. Տ. Մինասեան, առժամանակեայ քարոզիչ Գարակէօմրիւկի.

30. Տ. Արիստակէս Ծ. վրդ. Վանքեան, տեղապահ Շապին-Գարահիսարի. կ՚մնայ ի Բերա իբր հիւր.

31. Տ. Վրթանէս վրդ. Բապուճճեան, կ՚մնայ Սկիւտար առանց պաշտօնի.

32. Տ. Եզրաս Ծ. վրդ. Սաչլեան, առժամանակեայ քարոզիչ Էյուպի.

33. Տ. Եղիշէ Ծ. վրդ. Դուրեան, փոխ-վանահայր և վերատեսուչ Դպրեվանուց և անդամ Կրօն. Ժողովոյ.

34. Տ. Եղիշէ Ծ. վրդ. Գալֆայեան, նախկին տեղապահ Գաղատիոյ. կ՚մնայ ի Րումելի Հիսար իբր քարոզիչ.

35. Տ. Եղիա վրդ. Դերձակեան, կ՚մնայ յԱզգ. Հիւանդանոցի իբր հիւանդ.

36. Տ. Կիրակոս Ծ. վրդ. Կէօքեան, կ՚մնայ ի Գումգափու, պաշտօնավարութենէ զուրկ.

37. Տ. Գարեգին վրդ. Աժտէրեան, կ՚մնայ ի Գանտիլլի իբր քարոզիչ.

38. Տ. Յովհաննէս վրդ. Հուրիկեան, նախկին տեղապահ Եւդոկիոյ. կ՚մնայ ի Պօյաճը գիւղ իբր քարոզիչ.

39. Տ. Ներսէս վրդ. Պէրպէրեան, կ՚մնայ ի Գուրուչէշմէ առանց պաշտօնի.

40. Տ. Վրթանէս վրդ. Գալըպճեան, քարոզիչ Գասըմ փաշայի.

41. Տ. Եզնիկ Ծ. վրդ. Գալփաքճեան, նախորդ քարոզիչ Ղալաթիոյ. Եօզղատու տեղապահութեան ընտրուած.

42. Տ. Բարգէն վրդ. Կիւլէսէրեան, քարոզիչ Պէշիկթաշի, տեղապահ Ճանիկու.

43. Տ. Խոսրով վրդ. Պէհրիկեան, քարոզիչ Ս. Կարապետի, տեղապահ Տրապիզոնի.

44. Տ. Զաւէն վրդ. Տէր Եղիայեան, քարոզիչ Խասգիւղի, հիւրամեծար Պատրիարքարանի.

45. Տ. Մուշեղ վրդ. Սերոբեան, քարոզիչ Մագրգիւղի, Տեղապահ Արապկիրի.

46. Տ. Սմբատ վրդ. Սաատէթեան, քարոզիչ Պալաթու.

47. Տ. Աղան վրդ. Համամեան, փոխ-տեսուչ Դպրեվանուց, քիչ օրուան համար եկած.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ.

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գործադիր Ժողովոյն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրները՝ որք Ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ո՛և է աշխատութեամբ կը փափաքին մասնակցել Սահակ — Մեսրոպեա Գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատասիրութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1898 տարւոյ Յունուարի վերջ՝ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայոց ի Կոստանդնուպոլիս։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ լինին, իսկ ձեռագիրք մէկ օրինակ, որք, ինչպէս յայտնի է, ետ չեն դարձուիր։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

### ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ օրհնութեան յանուն պ. Իսահակայ Ղահրամանեան Մելիք—Ազամալեան Երևանցւոյ, ընդ որում շնորհի նմա մատանի մի զարդարեալ թանկագին քարամբք. Թ. 845։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով պատուիրի առնել կարևոր պատրաստութիւնս վասն օրհնութեան ս. Միւռոնի. Թ. 859։

— Օրհնութեան յանուն Յ. Չեանիկեան Թէոդոսեցւոյ. Թ. 866։

Կոնդակ յանուն հոգաբարձութեան Բուքրէշտ քաղաքի ի Ռումանիա, որով հրահանգին զամուսնական խնդրոց. Թ. 868։

— Յանուն Տեսչի Հոգևոր Ճեմարանի պ. Կ. Կոստանեանի, որով հաստատի ծրագիր ուսմանց և բաշխումն դասուց և ռոճկաց եռամեայ ժամանակաւ. Թ. 885։

— Օրհնութեան յանուն պ. Մինասայ Աշխանեան Ազուլեցւոյ. Թ. 909։

— Օրհնութեան յանուն պ. Յակոբայ Ադամեան Բագուեցւոյ. Թ. 910։

— Օրհնութեան յանուն Կ. Բէգի Մելիք—Թանգեան Բռնակոթեցւոյ. Թ. 913։

— Յանուն հոգաբարձութեան Հոգևոր դպրանոցին Հայոց Շուշւոյ, որով կարգի Տ. Տիրայր վարդապետն ժամանակաւոր պաշտօնակատար տեսչի դպրանոցին. Թ. 928։

— Յանուն հոգաբարձութեան Հոգևոր դպրանոցին Հայոց Երևանայ, որով կարգի պ. Նիկողայոսն Քարամեան ի պաշտօն Տեսչի դպրանոցին. Թ. 932։

— Յանուն Սինօդի ս. Էջմիածնի, որով Փոխանորդն Նուխւոյ Տ. Սահակ վարդապետն կարգի ի ժամանակաւոր վարումն պաշտաման նախանդամոյ վիճ. Կոնսիստորիային Հայոց Շուշւոյ. Թ. 934։

— Յանուն Տ. Սահակ վարդապետի ի նոյն միտս. Թ. 935։

— Յանուն Տ. Եղիշէ քահանայի Գեղամեան Բագուայ, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. Թ. 937։

— Յանուն Տ. Ղազարոս քահանայի Յովհաննէսեան Սիմֆէրոպոլի, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. Թ. 938։

— Յանուն Տ. Գիւտ քահանայի Աղանեան Տփղեաց, որով շնորհի նմա խաչ վարդապետական ականակուռ. Թ. 952։

— Յանուն Հոգևոր Հովուի յՈւստր քաղաքի յԱմերիկայ, որով նա հրահանգի ի գործս պաշտաման իւրոյ. Թ. 968։

### ՇՆՈՐՀԱՇԽՈՒԹԻՒՆՔ ՑԱՒՈՒՐ ՋՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՕԾՄԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ի 28 սեպտեմբերի 1897 ամի.

Կոնդակ յանուն վանահօր Մողնւոյ Ս. Գէորգայ վանից Տ. Թովմա վարդապետի, որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ. Թ. 993։

— Յանուն Տ. Ներսէս քահանայի Աշտարակայ, որով շնորհի կոչումն և պատուաւոր քահանայութեան. Թ. 994.

— Յանուն Տ. Սարգիս քահանայի Նոր Բայազիդու, որով շնորհի նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. Թ. 995։

— Յանուն Տ. Պետրոս քահանայի Հոռոմայ, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 996։

— Յանուն Տ. Ներսէս քահանայի Դարալագեազու, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 997։

— Յանուն Տ. Դաւիթ քահանայի Հին Ղրիմու, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. Թ. 998։

— Յանուն Տ. Գրիգոր քահանայի Մանդակունւոյ Զօրաբաշի եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 999։

— Յանուն Տ. Յովհաննէս քահանայի Ս. Մինաս եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 1000։

Յանուն Տ. Մկրտիչ քահանայի Գայֆաճեան Ախալցխոյ, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ Թ. 1001։

— Յանուն Տ. Աշոտ քահանայի Թեմուրազեան Ս. Գէորգ եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. Թ. 1002։

— Յանուն Էմմանուէլ քահանայի Նազարեան Ս. Կարապետ եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ. Թ. 1003։

— Յանուն Տ. Զաքարիա քահանայի Զարգեդեան Աւետեաց եկեղեցւոյ Տփղեաց, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 1004։

Կոնդակ հաստատութեան նորընտիր ուսուցչաց Ներսիսեան հոգեւոր դպրանոցի Հայոց Տփղեաց. Թ. 1041։

—Յանուն Տ. Կարապետ աւագ քահանայի Սէթեան Կ. Պօլսոյ, որով ըստ միջնորդութեան Ամեն. Ս. Պատրիարքի Կ. Պօլսոյ, շնորհին նմա իրաւունք կրելոյ զխաչն, որ շնորհեալ է նմա ի հոգելոյս Տ. Գէորգայ Դ. հայրապետէ եւ որոյ կոնդակն այրեալ է ի հրդեհի. Թ. 1060.

—Օրհնութեան յանուն Պետրոսի Կ. Տ. Մարտիրոսեան Բաշգիւղացւոյ վիճակին Կարուց վասն նուիրելոյ նորին մատենադարանի Ս. Աթոռոյս զգրչագիր աւետարան մի. Թ. 1061.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ՍՐԲԱԼՈՅՍ Միւռոնի օրհնութիւնը · Կ. Վ. · 387
2. Ս. Միւռոնօրհնութեան հանդէսը · · · · · 389
3. Լամբրոնի ժողովը Թարգմ. Թորոս քահ. Զուլալեանի · 391
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ · · · · · · 401

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. *** · · · · · · Յ. Յովհաննիսեան · 406
6. Նամակ Խմբագրութեան. Սահակ Եպիսկ. Խապայեան 406
7. Մեծ Սոկրատի Ս. Էջմիածնի եւ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռագրերը. · Մ. Վ. · 410
8. Յաւելուած Գրիգոր Խլաթեցու Պատմական վիպասանութեան · · · Գր. Խաչատրեան · 411
9. Հ. Գելցեր. Համառօտութիւն Բիւզանդական Կայսրների պատմութեան (թարգմ.) Մ. Վ. (Շարունակելի) 413
10. Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ. Գալուստ Տէր Մկրտչեան · · · · · · 422
11. Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը Մ. Աբեղեան (Կը շարունակուի) · · · · 424

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

12. Թէ ինչ միջոցների պէտք է դիմել դպրոցները կախարդելու առաջն առնելու համար · Գ. Դ. · 431
13. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ. · · · · · · 434

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

14. Հայի համբերատար ոգին · · · Կ. Կ. · 435
15. ՄԱՅՐ ԱԹՈՌ. · · · · · · · · · · · 438
ՏԱՃԿԱՀԱՅՔ · · · · · · · · · · 449
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. · · · · · · · · · · 454
Յաւելուած. · · · · 456
Յայտարարութիւններ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1897Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ եւ ՀՈԿՏԵՄԲԵՐ.

# ՆԵՐԲՈՂԵԱՆ
## ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈԲԱՅ,
### ԱՍԱՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
եւ
### ՎԱՐԴԱՊԵՏԻ ՍԱՍՆԱՑԻՈՅ.

(Շարունակութիւն եւ վերջ) *

Եւ կատարեալ զգոհութիւնն, առնոյր ընդ իւր զերանելին եւ եղանէր յՈննականեան վանսըն՝ առ աստուածարեալ միանձունսն որ էին թըւով հինգ հարիւր միակամ եղբայր։ Որոց բերկրեալ ընդ գալուստ սրբոյն՝ մանաւանդ ընդ աստուածատուր նշանն, եւ մտեալ ի տաճարն՝ աղաղակեն Զուրախեղեն եւ զՄաքըն՝ զԴրանն եւ զԾարկին, տալով փառս եւ աւրհնութիւն առաքողին եւ հայցէին շնորհել ընդ երկայն աւուրս։ Իսկ աստուածային եւ քահանայապետական գլուխն, խոնարհեալ խաւսէր ի խորոց սրտէ իբրեւ ընդ կենդանի ընդ Նըշխարս Կարապետին։

Ով ձայն բանին եւ չաւուշ [ա] արքային. տեսող յարգանդին՝ եւ երկրպագող յորովայնին. նախընթաց Թագաւորին եւ պատրաստող պողոտային. սրբող սրբոցին՝ եւ տեսող անտեսին. ծանաւթ անծանաւթին՝ եւ ցուցանող որոց տեսին. մեծ ի ծնունդս Նեւա. Քահանայապետական զաւակ, ամլածին ծաղիկ, հրեշտակատուր տղայ, ողջախոհ տրախիլ, [բ] անապատասուն տատրակ, մարախաճաշակ մարգարէ. ճրագ ճառագայթին եւ արփւսեակ արեգականն. հաւախաւս քաղցրաձայն վանող գիշերի եւ քարոզ տըւնջեան. յարուցող յընթացս եւ ի գործս եւ ժողովող յորջս եւ ի մորիս. զարնանաբեր ծիծառն եւ արգասին [գ] յերկրին. որպէս եղեր առթող հարսինն, եւ փեսաւէր փեսային զայլընտեամբք կրկին։ Այսպէս

* Տես. Արարատ Թ. Ը. եր. 398.
ա. ռամկական բառ է.
բ. Չկայ Ն. Հ. Բ. յունարէն բառ է.
գ. Անծանօթ բառ է, չկայ Ն. Հ. Բ.